

որոնք կարծում են թէ, պատմութիւնն էլ կը խաբուի. — քաւ լեցի, — պատմութիւնը շուտ թէ ուշ, ամեն ինչ անաչառութեամբ քննելոց է և դատելոց, որքան և մեր ժամանակակիցներս գուն գործներ չարն բարի՝ և բարին չար հանդէս դուրս բերել:

ՀԱՆՈՒՍՏ ԵՐԲԱՋԱՆԵԱՆՑ.

Ի 29 Յոնիստ 1878

Թ. Ն. Յ. Ի. Ն.

Այսուհետեւ եկեղեցի Հայաստանեայց այսպիսի դատերէ ազատ է, որովհետեւ Վեհ. Հայրապետի ջանիւք եւ առաջարկութեամբ՝ կուսակրօն եկեղեցականաց վերաբերեալ ժառանգութեան օրէնքները փոխուեցան, եւ այժմ կուսակրօն եկեղեցականաց ժառանգներն են Ս. Եւթիմիոսին եւ վանօրայք — ուր որ Միաբան ձեռնադրուած լինին, — ինչպէս նորահաստատ կանոններով իմաստին աւելի պարզ եւ ընդարձակ տեղեկութիւն հրատարակուած է Արարատ ամսագրոյս 1871 ամի (Չորրորդ շրջանի՝ Թ. Ա.) Մայիսի Թերթին մէջ յերեսն 49:

Ի Մ Ա Տ Բ Ա Ս.

Պարսկաստանի եւ Հնդկաստանի վիճակին Հայոց Առաջնորդ եւ Մ. Նուիրակի Գեր. Գրիգորիս Արքեպիսկոպոս ի 17/29 անցեալ Նոյեմբերի Կալիաթայէն մեկնելով՝ ի 21/5 Գեկտեմբեր ամսոյ հասած է ի Մատրաս՝ տեղւոյն Հայկական

փոքրիկ Հօտին այցելելոյ եւ դայն միութարելոյ համար, ուր եւ արժանաւոր յարգանօք եւ սիրով հիւրընկալուած է:

Աւելի ընդարձակ եւ կարեւոր տեղեկութիւնքը՝ ինչպէս Հնդկաստանու եւ Չինաստանու այլ տեղեաց՝ նոյնպէս Մատրասու Հայոց վերայ տակաւին ստացած չլինելով՝ — որ եւ այցելութեան աւարտմանէն զինի պիտի ստացուի, — առ այժմ՝ այսքանը միայն կարելի է հաղորդել՝ զի երբեմն եռանդուն եւ նշանաւոր Հայոց բազմութեամբ հաչակուած Մատրասը՝ ի ներկայիս հազիւ վախճան եւ շքանքններ ունի, Ս. Աստուածածին անուամբ մի եկեղեցի, գրամագլուխներով ապահովեալ դպրոց եւլն, եւ յանցելումն ծագած ազգային գժտութիւնը եւս՝ քան հարկն աւելի ռուբլի մնիսիլէն յետոյ՝ հանդարտած է քան զակրնկալեալն բարի հետեւանքով:

Գեր. Գրիգորիս Արքեպիսկոպոս ի 21/2 Յունիարի տարւոյս Մատրասէն վերադառնալով՝ չորրորդ օրը ի Կալիաթաս հասած է:

ՀԱՇՈՒՆՅՈՒՑԱԿ

ԵԼԵՒՄՏԻՑ ԵՐԿՍԵՌԻ ԳՊՐՈՅԱՅ

ՀԱՅՈՅ ԱՍՏՐԱԽԱՆՈՒ

Ի 1877 ԱՄԻ.

Խճաշար-Լեւոն Արարայ Անաշարայ.

Հոգարարձուծին Աստրախանայ Հայոց Հոգևոր երկուց սեռից՝ դպրոցաց ընդ ամին առարելով դիմառօտ հաշուեցուցակ մտից եւ ծախուց գումարաց իւրոց վասն 1877 անցելոյ ամի, խոնար-

հարար ինքրէ ի Խմբագրութենէդ տպագրութեամբ յէջս Արարատ ամաղորոյ, հրատարակել յընդ անուր տեղեկութիւն բարեւէր համազգայնոց:

**Հոգաբարձուք**

Յովսէփ Աւագ Քահանայ Բունիաթեանց,  
Բենիամին Մելիկեանցեանց,  
Ղաղար Գաւիթեան Էղեանց.

**Համար 4.**

2 Յունիսիս 1878 ամի

**Աստուծոյ անունով:**

**ԱՏԱՆԱՍԻԿ ՀԱՇԻՐ:**

Մնացորդ ի 1876 ամէ առ 1877 ամն:		
Տասն հատ բանկային	10	4
տոկոսաբեր դրամատոմսակր զումարաւ	5400	
Երկու հատ խաղաքիութեան տոմսք առաջին եւ երկրորդ ներքին փոխառութեան	343	
Չորս հատ սերի բիլէթք	200	
Պատրաստական դրամք	449 58	4564 58
<b>Մ---++</b>		
Նուիրագրամք պաշտպան անգամոց եւ բարեպաշտ անձանց	458	
Գանձանակագրամք ժողովեալը յեկեղեցիս Աստրախանայ	190 66	
Վարձատրամք բնակչաց զպրոցական տան	44 50	
Տուրք ուսմանց երկուց սեռից թոշակատու աշակարտաց	405	
Նուիրեալ դրամք յուսուցչէ Ռուսաց լեզուի ի Պ. Սիմոնովայ	46 66	
Սննդագրամք որք աշակերտուհւոյ Սիրոյ Թաւրիզեան, վճարեալ ի Տիկին		

Կատարինայ Յարութիւնեան Գոստենցեանց	60	
Տարեկան կապալադրամք նուիրեալ զեանոյ ի Մովսիսէ Ղօրղանեանց	50	
Գրամք ստացեալ ի Հոգարարձուքնէ աղքատաց վանն 1877 ամի	500	1172 82
<b>Ի գումարաց եկեղեցեաց</b>		
Աստրախանայ որոշեալ զըրամք	2462	
Տոկոսագրամք դրամատոմսակաց զպրոցապատկան զումարաց	4724 37	
Մի հատ բանկային տոկոսաբեր դրամատոմսակ նուիրեալ ի Յարութիւնէ Գէորգեան Թեկեանց, ի յիշատակ բռն նորա Մարիամու զումարաւ	100	
Մի հատ բանկային տոկոսաբեր դրամատոմսակ մատուցեալ յԱբրահամէ Փասոեանց, ի հաշիւ կտակուանդ զումարի Յարութիւնի Փուրվարդեանց	5610	3710
Գրամք վաճառեալ զասագրեանց	85 13	
Գրամք վաճառեալ զնոսագործութեանց աշակերտութեանց	58 55	445 70
<b>Մուտք</b>		
	8915	9
<b>Ընդհանուր զումար</b>		
	15277	47
<b>Ե---++</b>		
Ի տարեկան սոցիալ ուսուցչաց եւ վերակացուաց	4053 25	
Ի տարեկան սոցիալ պահպանաց	556	

Ի տարեկան ոռոճիկ ժամագործի . . . . .	50	4459	25
Ի զին վառելիքայտի եւ ի վարձ սայլորդի . . . . .	447	50	
Ի զին ուսումնական պիտոյից եւ զանազան իրաց . . . . .	291	46	
Ի վճար հարկաց վասն ապահովելոյ զգարատունն ի հրկիզումենէ . . . . .	65	40	
Ի վճար տոկոսեաց վասն գնելոյ զսերի բիլէթս . . . . .	8	11	
Ի վարձ կազմարարի . . . . .	6	40	
Ի զին կօշկաց ի պէտս չքաւոր ուսանողաց . . . . .	44	23	527
Ի զին դասադրեանց . . . . .	28	20	
Ի զին միոյ ծայնադրեալ մատենի երգեցողութեան սրբոյ Պատարաղի . . . . .	10	38	20
Ի սնունդ որք աշակերտուելոյ Թաւրիզեանց . . . . .			72
Գրամք վասն փոխարինելոյ ի սերի բիլէթ եւ ի պէտս ծախուց . . . . .		568	53
Գումար տարեկան ծախուց	5445	40	
Մնացորդ առ 1878 ամն . . . . .	7852	57	
Ընդհանուր գումար . . . . .	45277	47	

Առ մէկն Յունվարի 1878 ամի մնան՝ 12 հատ բանկային տոկոսաբեր դրամատոմսակք գումարաւ 7410 ռ. 2 հատ խաղարկութեան տոմար 515 ռ. 6 հատ սերի բիլէթք 500 ռ. եւ սրտրատական դրամք 107 ռ. 57 կ. — ընդ ամենն — եօթն հազար ութ հարիւր երեսուն եւ երկու քուրի երեսուն եւ եօթն կոպ. (7852 ռ. 57 կ.) :

Ըստ խնդրանաց Հոգաբարձութեան երկսեռի զպրոցաց Հայոց Աստրախանու՝ հետագայ յայտարարութիւնքը կհրատարակուին :

**ՅԵՅՏԵՐԵՐՈՒԹՒՒՆՔ.**

Աստրախանու երկուց սեռից թեմական Հոգևոր Գպրոցաց Հոգաբարձական Վարչութիւնը՝ հրաւիրում է Հայկական լիզու եւ Հայկաբանութեան արուեստ դասախօսելու քաջահմուտ եւ բարեբարոյ ուսուցիչ, ցանկացողները կարող են զիմեւ փութանակի Հոգաբարձական Վարչութեան պայմանները իմանալու համար՝ եթէ ունին ուսման եւ ուսուցչական իրաւանց կանոնադրեալ վկայութիւնքեր :

Աստրախանու Հայոց Օրիորդաց Հոգևոր զպրոցի մէջ կարօտութիւն է Հայկական՝ Ռուսական եւ Գաղղիական լիզուաց ծանօթ քաջափորձ Հայ արկնոջ, որ մշտապէս ուսման ժամերը զպրատան մէջ գտանելով՝ վերահասու լինի աշակերտաց բարոյական կեանքի ուղղութեանը, խօսակցելով նոցա հետը մայրենի մաքուր լիզուաւ, ե իւր անձին օրինակաւ՝ ուղղէ նորանց բարոյական կանոնաց մէջ: Յանկացողները այժմէն իսկ կարող են զիմեւ Հոգաբարձական Վարչութեանը պայմանները իմանալու՝ առաջարկմամբ ուսմանցն եւ ծագման վկայութիւնքոյ, այսու հասցէիւ :

« Въ Попечительство Астраханскихъ Армянскихъ Епархі альныхъ Духовныхъ Училищъ » :